

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. _____ **ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ** _____ ԿԱՏԱՐԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2018թ. պլանավորած աշխատանքներ.

ՆՊԱՏԱԿ 1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ		
1.1.	Վերամշակել մագիստրոսի («Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն») ՀԿԾ-ները՝ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:	Վերամշակվել են ֆակուլտետի երեք մասնագիտությունների կրթական ծրագրերը:
1.2.	Վերամշակել բակալավրի («Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Լրագրություն», «Թարգմանչական գործ») ՀԿԾ-ները՝ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:	Վերամշակվել են ֆակուլտետի հինգ մասնագիտությունների կրթական ծրագրերը:
1.3.	Վերամշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր:	Վերամշակվել են պրակտիկաների բարելավմանն ուղղված ծրագրերը:
1.4.	Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը ֆակուլտետում:	Լինգվաֆոնային կաբինետի, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած նոր լսարանների ստեղծում և կատարելագործում:
1.5.	Այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների ՀԿԾ-ների շրջանակում նախատեսված կրեդիտների գործադրմամբ բազմակողմանի զարգացած, բանավոր և գրավոր հայերենին պատշաճ մակարդակով տիրապետող գրագետ մասնագետների պատրաստման իրականացում:	Ոչ մասնագիտական ֆակուլտետներում <i>Հայոց լեզու և հայ գրականություն</i> առարկայի մատուցման որակի բարձրացում, նշված առարկաների դերի առավել կարևորում:
1.6.	Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում:	Ուսումնական պլանների, կրթական ծրագրերի վերանայում, վերամշակում, գնահատման նոր համակարգերի (4 վերլուծական գնահատման սանդղակ 4 տեսակի ինքնուրույն աշխատանքների համար, ռուբրիկներ և այլն) օգտագործում, Շարժունության գործող և նոր ծրագրերին ավելի մեծ թվով ուսանողների մասնակցություն:
1.7.	Ուսանողների ինքնուրույն աշխատանքների նկատմամբ	Ուսանողների ինքնուրույն աշխատանքների դերի առավել կարևորում:

	ուշադրության ավելացում, դրանց արդյունավետության բարձրացում:	
1.8.	Շարունակել առկա և հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	Առարկայական ծրագրերը, գեղարվեստական և գիտական գրականության ցանկերը, ընթացիկ և եզրափակիչ քննությունների հարցաշարերը էլեկտրոնային եղանակով տրամադրել ուսանողներին:
ՆՊՍՏԱԿ 2. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՅՆ ԿԱՐԿՆԵՐՆԵՐԻ ԿԱՐԵՆՈՒՄ		
2.1.	Ամբիոնների գիտական ուղղվածության որոշում, գիտական թեմաների ընտրություն և այդ ուղղությամբ բավարար որակի ապահովում:	Ամբիոնների գիտական թեմաներին համապատասխան գիտական նյութերի հրատարակում, այս աշխատանքներում ուսանողների ներգրավում:
2.2.	Ամբիոնների համալրում երիտասարդ և խոստումնալից կադրերով. հերթափոխի շարունակականություն:	Ինքնավերարտադրության դերի կարևորում, սեփական երիտասարդ կադրերով ամբիոնների համալրում:
2.3.	Սովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:	ՈԻԳԸ աշխատանքների կարևորում, միջազգային և հանրապետական ՈԻԳԸ նստաշրջաններին ուսանողների առավել մասնակցության ապահովում և մրցունակ գիտական աշխատանքների ներկայացում:
2.4.	Գիտաժողովների և սեմինարների կազմակերպում:	Միջազգային գիտաժողով՝ նմիրված Բ.Գ.Պ., պրոֆեսոր Մ. Սանթրյանի ծննդյան 80-ամյակին <i>լեզու, խոսք, իրականություն</i> խորագրով (02.11.2018) գրականության ամբիոն) 5-րդ միջազգային գիտաժողով <i>Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում</i> (11-12.10.2018) (ռուսաց լեզվի ամբիոն)
2.5.	Մշակել պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնամեթոդական գրականություն, դասագրքեր, ձեռնարկներ:	Գ.Խաչատրյան, Թ.Շահվերդյան, Լ.Պետրոսյան, Գրական հայերենի պատմություն (ուսումնական ձեռնարկ) Վ. Փիլոյան, Ակնարկներ արդի հայ գրականության, (ուսումնական ձեռնարկ)
ՆՊՍՏԱԿ 3. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		
3.1.	Ուսանողների մոտ արվեստի արժեքների նկատմամբ վերաբերմունքի ստեղծում:	Կազմակերպվել են էքսկուրսիաներ Վանաձորի կերպարվեստի թանգարան, Մտ.Զորյանի տուն-թանգարան, Գյումրիի Հովհ.Շիրազի, Միեր Մկրտչյանի տուն-թանգարաններ, Երևանի Մատենադարան և այլուր:
3.2.	Ֆակուլտետի ուսանողների մասնակցություն ՎՊՀ-ում կազմակերպվող միջոցառումներին:	Բանասիրական ֆակուլտետի օր՝ փետրվարի 19-ին, Բարեկենդան, սեպտեմբերի 21-ին քայլարշավ դեպի Մայմեխ, սպորտային միջոցառումներ և այլն:
ՆՊՍՏԱԿ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ		
4.1.	Աշխատաշուկայի պահանջներին համարժեք մասնագետների պատրաստում:	Լոռու մարզի դպրոցների ուսուցիչների, գործող ԶԼՄ-ների աշխատակիցների ճնշող մեծամասնությունը բուհի, մասնավորապես՝ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ են: Ուսուցիչների կազմը պարբերաբար թարմացվում էրիտասարդ կադրերով՝ հիմնականում ՎՊՀ-ի շրջանավարտներով:
4.2.	Որակի ապահովման հանձնախմբի աշխատանքների աշխուժացում:	Ամենամյա հաշվետվություններ կատարած աշխատանքների վերաբերյալ ֆակուլտետի խորհրդում:
4.3.	Ապահովել շրջանավարտների հետ ֆակուլտետի շարունակական կապը	Ֆակուլտետի շրջանավարտների մասնակցություն միջոցառումներին, ավարտական որակավորման

	և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին և ֆակուլտետին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:	քննություններին, գիտական գործունեության աջակցություն (հոդվածների տպագրություն ՎՊՀ <i>Տեղեկագրում</i>), հմտության դասեր բանասիրական ֆակուլտետում (թիվ 1 դպրոցի ուսուցչուհի Թ. Ղարաբեդյան և թիվ 8 դպրոցի տնօրեն Ա. Սարուխանյան)
4.4.	Բուհ-դպրոց կապի ամրապնդում	Մարզի դպրոցների աշակերտների համար «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն», «Անգլերեն լեզու» առարկաների գծով ամենամյա օլիմպիադաների անցկացում 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը, դասախոսությունների անցկացում դպրոցներում (Լ.Պետրոսյան, Հ.Մելքոնյան), ասմունքի մրցույթներ
4.5.	Որակյալ գիտական և պրակտիկ կադրերով ամբիոնների դասախոսական անձնակազմի համալրում:	Ամբիոնները պարբերաբար համալրվում են ֆակուլտետի շրջանավարտներով (2017-2018թթ. գրականության ամբիոն՝ <i>Աբովյան Ռուզաննա, Միսակյան Գուլնարա</i> (ժամավճար), օտար լեզուների ամբիոն՝ <i>Փարեմուզյան Անահիտ, Էնֆենջյան Մարիաննա, Սարգսյան Էլլա</i> , ռուսաց լեզվի ամբիոն՝ <i>Հարությունյան Ազնեսա</i> (լաբորանտ):
ՆՊԱՏԱԿ 5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ		
5.1.	Մասնակցություն ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդ, ՈԻԽ) աշխատանքներին:	Ֆակուլտետի ներկայացուցիչները (բ.գ.դ., պրոֆ. Վ.Եղիազարյան, բ.գ.թ., դոցենտ Կ.Առուստամյան, բ.գ.թ., դոցենտ Հ.Հարությունյան, բ.գ.թ., դոցենտ Լ.Վարդանյան, բ.գ.թ., դոցենտ Վ.Փիլոյան, բ.գ.թ., դոցենտ Ա.Պողոսյան, ուսանողներ՝ Ռ.Պետրոսյան, Ս.Սարգսյան, Օ.Բաղդասարյան, Լ.Հակոբյան, Ա.Ազարյան, Լ.Ղուլիսյան, Շ.Ներսեսյան) մասնակցում են ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտխորհուրդ, ՈԻԽ) աշխատանքներին:
ՆՊԱՏԱԿ 6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ		
6.1.	Աշխատակիցների և ուսանողների մասնակցություն Շարժունության ծրագրերին:	Շարժունության ծրագրերով մեկ կամ երկու կիսամյակով ուսանողների ուսումնառության շարունակություն Լեհաստանի, Ռումինիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, ԱՄՆ-ի, Շվեդիայի համալսարաններում:
6.2.	Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան, Կոստրոմայի պետական, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանների հետ ֆակուլտետի կապի ամրապնդում:	Փոխադարձ այցելություններ, մասնակցություն գիտաժողովներին, կրթական ծրագրերի փոխանակում:
ՆՊԱՏԱԿ 7. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ		
7.1.	Բուհում լավագույն շրջանավարտներին աշխատանքով ապահովելու աջակցություն:	2017-2018թթ.- Գրականության ամբիոն՝ <i>Միսակյան Գուլնարա</i> (ժամավճար), <i>Աբովյան Ռուզաննա</i> , Օտար լեզուների ամբիոն՝ <i>Փարեմուզյան Անահիտ, Էնֆենջյան Մարիաննա, Սարգսյան Էլլա</i> , Ռուսաց լեզվի ամբիոն՝ <i>Հարությունյան Ազնեսա</i> (լաբորանտ):

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 95,5 տոկոս (2016թ.՝ 97,7 տոկոս, 2017թ.՝ 97,3 տոկոս): Հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է 86,7 տոկոս (2016թ.՝ 87,2 տոկոս, 2017թ.՝ 86,9 տոկոս):

Մագիստրատուրայում առաջադիմությունը կազմել է 97,6 տոկոս (2016թ.՝ 99 տոկոս, 2017թ.՝ 99 տոկոս):

Շրջանավարտների թիվը կազմել է՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգ՝ 69 ուսանող (2016թ.՝ 100 ուսանող, 2017թ.՝ 75 ուսանող): Հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է 41 ուսանող (որից 1-ը՝ երկտարեցի) (2016թ.՝ 45 ուսանող, 2017թ.՝ 40 ուսանող):

Մագիստրատուրայի շրջանավարտների թիվը՝ առկա համակարգ՝ 31 ուսանող (2016թ.՝ 31 ուսանող, 2017թ.՝ շրջանավարտ չի եղել):

Ուսումնական պլանները վերանայվել և վերամշակվել են:

Ամբիոնների աշխատակիցները տպագրել են.

Հայոց լեզվի ամբիոն - 2016 - 1 ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց (Դ.Գյուլգասյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ (ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց), Գլոբալ համալսարան, 1211South Glenstone Avenue Springfield, Missouri 65804 USA, Երևան, 2016, 366 էջ), 16 հոդված, 4 թեզիս:

2017 - 1 ուսումնական ձեռնարկ (Հ. Մելքոնյան, Լեզվաբանության հիմունքներ, Վանաձոր, 2017, 492 էջ), 21 հոդված, 4 գրախոսություն

2018 - 17 հոդված, 1 գրախոսություն:

Գրականության ամբիոն - 2016 - 1 մենագրություն (Հովհ. Այվազյան, Արձագանքներ, Վանաձոր, Միմ տպագրատուն ՄՊԸ, 2016, 242 էջ), 10 հոդված:

2017թ. - 2 մենագրություն (Վ.Եղիազարյան, Հովհաննես Սարկավազ Իմաստասեր «Տաղեր և հոգևոր երգեր» /Աշխատասիրությամբ բ.գ.դ., պրոֆեսոր Վանո Եղիազարյանի/, Երևան, «ԱՐՄԱՎ», 2017թ., Վ.Եղիազարյան, Նահապետ Քուչակ. աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վանո Եղիազարյանի, Երևան, 2017թ.), 1 ուսումնական ձեռնարկ (Վ. Փիլոյան, Ակնարկներ արդի հայ գրականության), 26 հոդված:

2018թ. - 1 մենագրություն (Վ.Եղիազարյան, Գրիգոր Նարեկացին և 10-րդ դարի հայ գրականությունը, 1 ուսումնական ձեռնարկ (Վ. Փիլոյան, Ակնարկներ արդի հայ գրականության), 27 հոդված

Ռուսաց լեզվի ամբիոն - 2016 - 5 հոդված:

2017 - 1 ուսումնամեթոդական ձեռնարկ (Акопян Жанна, Оганесян Гаяне, Практический курс русского языка, Часть 1, Ереван, 2017), 2 հոդված:

2018 - 12 հոդված:

Օտար լեզուների ամբիոն - 2016 - 4 հոդված:

2017 - 15 հոդված:

2018 - 3 հոդված:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը ունեցել է ձեռքբերումներ կամ մասնակցել միջոցառումների՝

Դպրոց-բուհ կապ

Հայոց լեզվի ամբիոն - Ամբիոնի ասիստենտ Ն.Անտոնյանը մոտ մեկ ամիս վարպետության դասեր է պարապել Վանաձորի թիվ 8 դպրոցում՝ 5-րդ և 8-րդ դասարաններում:

8-րդ դասարանում ինտերակտիվ դասեր է վարել հետևյալ թեմաներով՝ «Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ», «Որոշիչ», «Կապակցության եղանակներն ու միջոցները»: Առանձին անդրադարձ է կատարել լեզվական սխալներին և վարել է համակարգչային դաս «Լեզվական սխալների թոփ տասնյակը» թեմայով:

5-րդ դասարանում մայրենիի դասընթացը ծառայեցրել է ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Սմբատ Շահազիզի «Ես լսեցի մի անուշ ձայն» բանաստեղծության հիման վրա կազմակերպել է բաց դաս, որին ներկա են եղել դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանը, փոխտնօրեն Ա.Մատինյանը և դպրոցի մեթոդախմբի անդամները:

Հետագա համագործակցության ծրագրեր են ներկայացվել թիվ 1 դպրոցի և թիվ 8 դպրոցի տնօրեններին և մեթոդախմբումներին՝ փոխադարձ դասեր վարելու կապակցությամբ:

Օտար լեզուների ամբիոն - Ապրիլի 11-ին բուհ-դպրոց կապերի շրջանակներում համալսարանում անցկացվել է «Անգլերեն լեզու» առարկայի օլիմպիադան (Լոռու մարզի դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտների համար), որին մասնակցել են Վանաձոր քաղաքի №5, №10, №11, №13, №17, №18, ավագ, «Էվրիկա» դպրոցների, ՎՊՀ վարժարանի, Շահումյան, Դեբեդ, Նոր Խաչակապ, Կուրթան Կաթնաղբյուր, Մարգահովիտ գյուղերի միջնակարգ դպրոցների 134 աշակերտներ (58 աշակերտ՝ 10-րդ, 54 աշակերտ՝ 11-րդ և 22 աշակերտ՝ 12-րդ դասարաններից): աշակերտների առաջադիմությունը կազմել է 92%, լավ արդյունքներ են ցուցաբերել Վանաձորի №18 դպրոցի և ՎՊՀ վարժարանի աշակերտները:Գրականության ամբիոն – Ապրիլին և նոյեմբերին Լոռու մարզի 8-12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է ասմունքի մարզային մրցույթ-փառատոն:

2018թ. բուհ-դպրոց կապի ամրապնդման շրջանակներում ամբիոնի կողմից կազմակերպվել է վիկտորինա-մրցույթ «Ամեն ինչ ԱՄՆ-ի մասին» խորագրով Լոռու մարզի ավագ դպրոցի աշակերտների համար:

Գրականության ամբիոն – Ապրիլին և նոյեմբերին Լոռու մարզի 8-12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է ասմունքի մարզային մրցույթ-փառատոն:

Ապրիլին ավագ դպրոցների 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է օլիմպիադա հայ գրականությունից:

Ռուսաց լեզվի ամբիոն – Ամբիոնի աշխատակիցներ Կ. Առուստամյանը, Ս. Բարսեղյանը, Ժ. Հակոբյանը, Գ. Հովհաննիսյանը այցելել են քաղաքի դպրոցներ:

Ամբիոնի մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել է առարկայական օլիմպիադա ռուսաց լեզվից և ռուս գրականությունից ավագ դպրոցի աշակերտների համար, ինչպես նաև ասմունքի մրցույթ քաղաքի և մարզի հիմնական և ավագ դպրոցների աշակերտների համար:

Ամբիոնի դասախոս Ս. Բարսեղյանը “Ռուսաց լեզու և գրականություն” մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների հետ արտադրական պրակտիկայի

շրջանակներում կազմակերպել է վիկտորինա թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտների հետ ՎՊՀ-ում:

Մասնագիտական կրթական ծրագրեր

2018թ. վերանայվել են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մանկավարժական ուղղվածության բակալավրական կրթական ծրագրի հետևյալ բաղադրիչները՝

1. Վերանայվել և թարմացվել են ԿԾ-ում ներառված ԱՌԻՄՓ-ները:

2. Գնահատման համակարգի գործնական իրացման ձևերի մշակում՝ (այս աշխատանքը կատարվել էր նաև 2017 թ., որը վերաբերում էր համալսարանական ՄԿԾ-ին) **ա) ընկալում, բ) գիտելիք, գ) հմտություն, դ) կարողություն** լրակազմը ապահովելու նպատակով:

3. Հայոց լեզվի ամբիոնի հետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության ապահովում (անհրաժեշտ ուսումնասիրություններն ընդգրկել ԱՌԻՄՓ-ներ և ներդնել ՄԿԾ-ի բարելավված տարբերակ):

4. Դասընթացների (մոդուլների) վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանության վերանայում և բարելավում՝ մանկավարժական ՄԿԾ-ի համար:

2018թ. վերանայվել են «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության մանկավարժական ուղղվածության բակալավրական կրթական ծրագրի հետևյալ բաղադրիչները՝

1. Վերանայվել և թարմացվել են ԿԾ-ում ներառված ԱՌԻՄՓ-ները:

2. Գնահատման համակարգը մասնակի վերանայվել է:

Վ. Փիլոյանը մասնակցել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրական կրթական ծրագրի վերանայմանը, մասնակցել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագիրը կազմելու աշխատանքներին :

2018թ. վերանայվել են «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության մանկավարժական ուղղվածության բակալավրական կրթական ծրագրի հետևյալ բաղադրիչները՝

1. Վերանայվել և թարմացվել են ԿԾ-ի վերջնարդյունքները:

2. Վերանայվել և թարմացվել են ԿԾ-ում ներառված ԱՌԻՄՓ-ները:

3. Ամբիոնի հետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության ապահովում:

Վերանայվել և ճշգրտվել է ԱՌԻՄՓ-ների վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանությունը՝ մանկավարժական և համալսարանական ՄԿԾ-ների համար:

Հանդիպումներ

Գրականության ամբիոն - Հուլի-միջոցառում նվիրված բանաստեղծ Միեր Բեժանյանի ծննդյան 80 -ամյակին: /զեկ. Հերմինե Բաբուռյան/

Գիտաժողովներ

Նոյեմբերի 2-ին գրականության ամբիոնը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ նվիրված Բ. Գ. ղ., պրոֆեսոր Մ. Սանթրյանի ծննդյան 80-ամյակին

Գիտական աստիճան, կոչում

Ամբիոններում քննարկված առենախոսություններ

Անդրանիկ Վաչագանի Այվազյան - «Լոռություն» ֆենոմենի լեզվամշակութային դրսևորումները քաղաքական խոսույթում (անգլերեն և հայերեն նյութի հիման վրա) (հայոց լեզվի ամբիոն)

Վանուհի Գառնիկի Բաղմանյան - Նիկողայոս Ադոնցի լեզվաբանական ժառանգությունը (հայոց լեզվի ամբիոն)

Արփինե Գագիկի Խալաթյան - Անգլերեն բնականվանումների բառիմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները՝ հայերենի համեմատությամբ (օտար լեզուների ամբիոն)

Դիանա Իվանի Մովսիսյան - Հասկացում արտահայտող բայերի իմաստագործաբանական բնութագիրը անգլերենում (հայերենի զուգադրությամբ) (օտար լեզուների ամբիոն)

Հեղինե Վեսմիրի Խարազյան - Ամերիկյան սոցիալական տպագիր գովազդի լեզվագործաբանական առանձնահատկությունները (օտար լեզուների ամբիոն)

Նոնա Ռաֆիկի Դավթյան - Պետրոս Հաճյանի կյանքը և գործը (գրականության ամբիոն)

Սիրվարդ Ալեքսանդրի Ասրյան - Ռուբեն Հովսեփյանի գեղարվեստական արձակը (գրականության ամբիոն)

Մասնակցություն գիտաժողովների

V Международная научная конференция, «Язык и литература в контексте межкультурной коммуникации», 2018 - Շ. Ղուկասյան, Ն. Անտոնյան, Առուստամյան Վ., Թադևոսյան Թ., Հակոբյան Ճ., Հովհաննիսյան Գ., Ժամհարյան Լ.

V Международная научная конференция «Демонология как семиотическая система» Москва - Թադևոսյան Թ.

IV Всероссийский Конгресс фольклористов. Тула - Թադևոսյան Թ.

Круглый стол “О перспективах расширения сотрудничества России и Армении в сфере высшего и среднего образования. Деятельность филиалов российских вузов в Армении - Բարսյան Ս.

Բ. Գ. ղ., պրոֆեսոր Մ. Սանթրյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով - Վ. Եղիազարյան, Վ. Փիլոյան, Գ. Մալումյան, Ա. Սարուխանյան, Հ. Բարուռյան, Տ. Դանիելյան

Международная научно-практическая конференция - Ա.Սիմոնյան

«Գիտաժողով՝ նվիրված ՀՀ հռչակման 100-ամյակին» - Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան – Վ.Փիլոյան
Հայագիտական միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան 100-ամյակին – Վ.Եղիազարյան
Ջահուկյանական ընթերցումներ-2018 - Թ. Շահվերդյան, Լ. Պետրոսյան
Աբեղյանական ընթերցումներ, 2018 - Թ. Շահվերդյան
Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՊՄՀ հիմնադրման 95-ամյակին - Լ. Պետրոսյան, Հ. Խաչատրյան

ՌԻԳԸ

2018 թ. ֆակուլտետի ուսանողները մասնակցել են հետևյալ ուսանողական գիտական նստաշրջաններին.

1. **Շիրակի պետական համալսարան** - հայոց լեզվի ամբիոն-9 ուսանող, ռուսաց լեզվի ամբիոն-5 ուսանող
2. **Արցախի պետական համալսարան** - հայոց լեզվի ամբիոն-2 ուսանող
3. **Վանաձորի պետական համալսարան** - հայոց լեզվի ամբիոն- 9 ուսանող, գրականության ամբիոն-11 ուսանող

Շարժունության ծրագիր

2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակում Շվեդիայի Լինչյոպինգի համալսարանում 1 կիսամյակ սովորել և վերադարձել են Առուստամյան Ռիման («Անգլերեն լեզու և գրականություն» 2-րդ կուրս), Երիցյան Օրսաննան («Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս), Ռումինիայի Ալեքսանդրու Կուզայի անվան համալսարանում սովորել և վերադարձել է Դերձյան Վեներան («Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս), 2017-2018 ուստարում Լեհաստանի Պոզնան քաղաքի Ադամ Միցկևիչի անվան համալսարանում 1-ամյա ուսումն ավարտել և վերադարձել են Մաթոսյան Օֆելյան և Մելիքսեթյան Նելլին («Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս) և Հովհաննիսյան Արգամը («Ռուսաց լեզու և գրականություն» մագիստրատուրայի 1-ին կուրս):

2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակում Շվեդիայի Լինչյոպինգի համալսարանում ուսանելու են մեկնել Մանվելյան Մելինեն («Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրս), Սուքասյան Պալինան («Անգլերեն լեզու և գրականություն» 4-րդ կուրս):

Մատենավարությանն ու գնահատմանն առնչվող հարցեր

Մատենավարության վիճակն ավելի արդյունավետ էր, երբ ֆակուլտետում գործում էր ավագ խորհրդատուի հաստիք: Այժմ ողջ ծանրաբեռնվածությունը դեկանատի ուսերին է: Փորձում ենք հնարավորինս արդյունավետ աշխատել: Առաջացած հարցերը քննարկվում են ֆակուլտետի գիտական խորհրդի և դեկանատի նիստերում, թերացողներին արվում են դիտողություններ դեկանի և ամբիոնների վարիչների կողմից, տրվում են հանձնարարականներ: Ամբիոնների նիստերում

անպայման անդրադառնում են թերացումներին, առկա խնդիրներին և աշխատում մեկ շաբաթվա ընթացքում շտկել դրանք:

Ուշադրության կենտրոնում է նաև գնահատման հարցը, կարևորվել է գործնական պարապմունքների ժամանակ խմբի բոլոր ուսանողներին անաչառ գնահատելու անհրաժեշտության հարցը, որը, սակայն, առայժմ բոլորի մոտ չէ, որ ցանկալի արդյունք է տալիս:

Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հարցեր

2018թ. ամբիոնների դասախոսների կողմից վերանայվել են անհատական և ինքնուրույն աշխատանքների ձևերն ու թեմաները, որոնց մի մասն արդեն ընդգրկված է ԱՌԻՄՓ-ներում, իսկ մյուս մասը քննարկման փուլում է:

Գրականության ամբիոնում հանձնարարվում են մշակումներ, բանահյուսական նյութերի գրառումներ, գիտական բնույթի ուսումնասիրությունների մշակումներ, գրական երկի՝ այլ արվեստների միջոցներով արտահայտություններ՝ նկարչություն, երաժշտություն, թատրոն, քանդակագործություն: Ապահովվում է միջառարկայական կապ, ընդլայնվում է գիտելիքների շրջանակը: Անչափ կարևորվում է թեմաների ընտրությունը, որոնք նպատակային լինելու առումով պետք է լրացնեն դասընթացը՝ բարձրացնելով մասնավոր հարցերի իմացության մակարդակը: Ինքնուրույն աշխատելը մեծապես հետաքրքրում է ուսանողին և առավել արդյունավետ է:

Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար կիրառվում են վերլուծական գնահատման սանդղակները:

Մագիստրոսական թեզերի թեմաների առնչությունը ամբիոնների գիտական թեմաներին

Գրականության ամբիոնում մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպման հիմքում ընկած են հետևյալ իրողությունները.

ա) այդ թեմաների համապատասխանությունը դպրոցական ծրագրերում ներառված հեղինակների և ստեղծագործությունների հետ,

բ) այդ թեմաների համապատասխանությունը ամբիոնի նախատեսած գիտական ուղղությունների հետ (գրական կերպար և Լոռում ծնված և Լոռուց ծնված գրականություն),

գ) այդ թեմաների արդիական հնչեղությունը՝ կապված գրական պրոցեսի և հայ գրականության ու գրականագիտության արդի հիմնախնդիրների հետ:

Այս ամենի արդյունքում մագիստրոսական թեզերի թեմատիկ ամբողջությունը բավարարում է մագիստրանտների ինչպես գիտական, այնպես էլ գեղագիտական պահանջմունքները:

Դասախոսական տեքստերի լսում և քննարկում

2018թ. ընթացքում իրականացվել և իրականացվում են դասալսումներ ամբիոնների դասախոսների մոտ: Դասախոսական տեքստերը քննարկվում են, շտկվում կամ նորացվում: 2017-2018 ուստարվանից «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի բոլոր կուրսերում որպես դասագիրք օգտագործում են «English Leader» դասագիրքը: Հատուկ քննարկման առարկա են դարձել ԱՌԻՄՓ-ներում նորագույն գրականության ցանկի ընդլայնման և դրանք դասախոսական տեքստերում ընդգրկելու, առարկայի արդիական հիմնախնդիրներին և վերջնարդյունքներին ԱՌԻՄՓ-ների բովանդակային համապատասխանության հարցերը:

Արդիական թեմաների շուրջ սեմինարների կազմակերպում

Սեմինարների կազմակերպման հիմքում որպես ելակետ են դիտարկվում դասախոսների ներառվածությունը ամբիոնների գիտական ուղղությունների ուսումնասիրության մեջ և դասախոսների անձնական ու գիտական հետաքրքրությունների շրջանակը: Այս իմաստով չկա որևէ թեմա կամ սեմինարի նիստ, որ չունենա արդիական հնչեղություն:

Ռուսաց լեզվի ամբիոնում ըստ ընդունված ժամանակացույցի անցկացվում են ուսումնամեթոդական սեմինարներ, որոնցում ներկայացվում են այն գիտական հարցերը, որոնք առնչվում են ամբիոնի գիտական ուղղվածությանը: Սեմինարներին քննարկվում են նաև այլ արդիական հարցեր:

Օտար լեզուների ամբիոնում «English Leader» դասագրքի արդյունավետ օգտագործման շուրջ կազմակերպվում են կլոր-սեղան քննարկումներ, որի արդյունքում վեր են հանվում դասավանդման և ուսումնառության հետ առնչվող մի շարք խնդիրներ:

2. 2018 թ. կատարված աշխատանքներն ըստ սահմանված նպատակների և խնդիրների¹:

(ցույց են տրվում.

- կատարված աշխատանքներն ըստ պլանավորման՝ կարևորելով աշխատանքի արդյունքը, ցուցանիշները, որակական և քանակական ձեռքբերումները
- չպլանավորած, բայց կատարած աշխատանքները:)

3. 2018թ. համար պլանավորված աշխատանքները, որոնք չեն կատարվել:

- (նշվում է չկատարված աշխատանքը և պարտադիր ներկայացվում է պատճառը)
- նշվում է նաև մասամբ չկատարված աշխատանքը և պարտադիր ներկայացվում է պատճառը
- առաջարկ չլուծված խնդիրների կարգավորման, իրականացման ուղիների վերաբերյալ)

4. SWOT վերլուծություն ստորաբաժանման աշխատանքների վերաբերյալ:

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ միտումները, 2019 թ. ստորաբաժանման կողմից իրականացվելիք աշխատանքների ցանկը (անդրադառնալով ինչու¹, ինչպե՞ս, մարդկային ի՞նչ ռեսուրսներով, ի՞նչ միջոցներով, ու՞մ պատասխանատվությամբ, ին՞չ վերջնական արդյունքով հարցերին):

Օր.

¹ Հաշվետվության մեջ անդրադառնալ 3 տարվա համեմատական վերլուծությանը

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
<i>Ընդհանուր ձևակերպումը</i>	<i>Քայլերը</i>	<i>Ստորաբաժանման ներկայացուցիչ</i>	<i>Կարող են լինել բուհի այլ ստորաբաժանումներ, կամ չհամագործակցել</i>	<i>Անսվա կամ կիսանյակի նշագրմամբ</i>	<i>Թվեր, փաստաթղթեր, արձանագրություններ, միջառցառումներ.....</i>	<i>Եթե կան /ցանկալի է նշվի/</i>
1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ						
1. Մագիստրոսական նոր ՄԿԾ («Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն») ներդրման նախապատրաստում	Գործող ՄԿԾ-ների նկատմամբ հետաքրքրության նվազում,	Դեկան, ամբիոններ:		2019-2020	Մրցունակ ՄԿԾ-ի ներդրում:	Կրթության նկատմամտ հետաքրքրության նվազում, դիմորդների արտահոսք:
Աշխատաշուկայում մրցունակ, արհեստավարժ, պատասխանատու բարձրակարգ մասնագետների պատրաստում:		Ֆակուլտետի ուսումնական գործընթացն ապահովող ամբիոններ:		2019-2020	Պահանջարկին համապատասխան առավել մրցունակ և արհեստավարժ մասնագետների պատրաստում:	Կայացած աշխատաշուկայի բացակայություն:
Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում:		Ամբիոններ:		2019-2020	Ամբիոնների համալրում պատրաստված արհեստավարժ կադրերով:	Բարձրակարգ մասնագետների արտահոսք:
2. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔ						
Պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնամեթոդական գրականության, դասագրքերի, ձեռնարկների		Ամբիոններ:		2019-2020		

մշակում:						
Ամբիոնների համալրում երիտասարդ և խոստումնալից կադրերով. հերթափոխի շարունակականություն:		Ամբիոններ:		2019-2020		Երիտասարդ կադրերի արտահոսք:
Մովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:		Դեկանատ, ամբիոններ, ֆակուլտետի ՈԻԳԸ:		2019-2020		
3. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
Ֆակուլտետի ուսանողների մասնակցություն ՎՊՀ-ում կազմակերպվող միջոցառումներին:		Դեկանատ, խորհրդատուներ, ֆակուլտետի ՈԻԽ:		2019-2020		Ուսանողության զգալի հատվածի կողմից միջոցառումների նկատմամբ անտարբերություն:
ՈԻԽ աշխատանքների ակտիվացում:		Դեկանատ, խորհրդատուներ, ֆակուլտետի ՈԻԽ:		2019-2020	ՈԻԽ աշխատանքներին մասնակցող ուսանողների թվի աճ:	
4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ						
Աշխատաշուկայի պահանջներին համարժեք մասնագետների պատրաստում:		Դեկանատ, ամբիոններ		2019-2020		
Որակի ապահովման		Դեկանատ,		2019-2020		

հանձնախմբի աշխատանքների աշխուժացում:		ամբիոններ				
Որակյալ գիտական և պրակտիկ կադրերով ամբիոնների դասախոսական անձնակազմի համալրում:		Ամբիոններ		2019-2020		
5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ						
Մասնակցություն ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտխորհուրդ, ՈԻԽ) աշխատանքներին:		Դեկանատ, ամբիոններ, ուսանողություն		2019-2020		
6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ						
Աշխատակիցների և ուսանողների մասնակցություն շարժունության ծրագրերին:		Դեկանատ, ամբիոններ, խորհրդատուներ, ֆակուլտետի ՈԻԽ:		2019-2020	Ուսանողների և դասախոսների շարժունության իրականացում և ակտիվացում:	
Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան, Կոստրոմայի պետական, Մինսկի, Վոլգոգրադի պետական լեզվաբանական համալսարանների հետ ֆակուլտետի		Դեկանատ, ամբիոններ		2019-2020	Ֆակուլտետի կապերի միջազգայնացում:	Աշխատակիցների և ուսանողության մի մասի կողմից օտար լեզուների ոչ բավարար իմացություն:

կապի ամրապնդում:						
7. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ						
Բուհում լավագույն շրջանավարտներին աշխատանքով ապահովելու աջակցություն:	Երիտասարդ կադրերով ամբիոնների համալրում:	Դեկանատ, ամբիոններ		2019-2020		Ուսանողության թվի կտրուկ անկման պատճառով ամբիոններին հատկացվող ժամերի նվազում:

Բանասիրական ֆակուլտետի դեկան `

Ա.Պողոսյան